ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 07-ի արտահերթ նիստի.

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Արմենուհի Ոսկանյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը, Գրիգոր Կարապետյանը և Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սերյոժա Սարդարյանը և Էմմա Գասպարյանը:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Ներկայացվեց օրակարգը՝

Նիստը վարող ներկայացրեց և առաջարկեց հաստատել օրակարգը ներկայացված որոշման նախագծերով:

Կողմ՝ 13, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց նիստի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կազմում ընդգրկված 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

2. 2023թ-ի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

4. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կազմում ընդգրկված 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի տարածքում ներառված թվով 6 բնակավայրեր՝ Անտառամուտ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Քարաբերդ, ունեն 500-ից պակաս հաշվառված բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի առաջարկում ենք ավագանուն տալ հավանություն՝ բնակավայրերում վարչական ղեկավարներ ունենալուն: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - 2023թ-ի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի ավագանու 15.11.2022թ-ի «2023 թվականի համար ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ արդեն իսկ քննարկվել և հաստատվել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը, որը նախօրոք ուղարկվել էր պետա-իրավական փորձաքննության: Հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված պետական փորձագիտական եզրակացությունը,

անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել 131-Ն որոշումը և հաստատել նոր խմբագրությամբ: Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մեջ ոչ մի փոփոխություն չի կատարվում, փոփոխությունը հիմնականում կապված է հավելվածի կետերի, ենթակետերի և պարբերությունների ճիշտ համարակալման, վերնագրում հապավումների բացառման հետ, կատարվել է եզրակացությամբ ներկայացված համապատասխան փոփոխությունները: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ Արջուտ բնակավայրում այլընտրանքային նախակրթական ծրագրով իրականացվող մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են: Ծրագիրն իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ԵՄ-ի ֆինանսավորմամբ, համայնքին է հատկացվում 5275.0 հազ. դրամ, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային և ծախսային բաժիններում: Ավարվել է նաև «Լեռնաջուր բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ» սուբվենցիոն ծրագիրը: Համայնքը իր կողմից կատարվող ծրագրի ընդհանուր արժեքի 45 տոկոսն արդեն իսկ վճարել է, պետության կողմից հատկացվելիք 6983.0 հազ. դրամը անհրաժեշտ է ներառել բյուջեում և ուղղել համապատասխան ծախսային ուղղությամբ: Համայնքի եկամուտների բաժնում փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկային ցուցանիշները պակասեցվել է մոտ 16.5 մլն. դրամով, քանի որ Ձորագետ բնակավայրի բնակիչ Արմեն Վահեի Ղալայանի նկատմամբ իրականացվել է վարչական վարույթ, նրա վրա հաշվառված փոխադրամիջոցի ապառքի գումարի բռնագանձման պահանջով համայնքապետարանը դիմել է ԴԱՀԿ, սակայն գործընթացը երկար ժամանակ է պահանջում, իրատեսական չէ նշված գումարը 2022թ-ի ընթացքում բյուջե մուտքագրումը, այդ իսկ պատճառով նշված գումարը հանվում է պլանային ցուցանիշներից՝ եկամուտների հավաքագրման ցուցանիշները ապահովելու և իրատեսական եկամուտներ ապահովել նպատակով:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Հաշվի առնելով Լոռու մարզպետի 01.12.2022թ-ի N 01/112,3/09782-2022 գրությունը՝ պ-ն Կոստանդյանը ընդգրկվել է Ա. Խաչատրյանի գլխավորած պատվիրակության կազմում և գործուղվում է Բաշկորտոստանի Հանրապետության ս.թ. դեկտեմբերի 14-16-ը մասնակցելու ՈՒֆա քաղաքում կայանալիք «Միջազգային բիզնես շաբաթ 2022թ.» ֆորումին մասնակցելու նպատակով: Առաջարկվում է Փամբակ համայնքի ավագանու 15.11.2022թ-ի թիվ 140-Ա որոշմամբ հաստատված հերթական նիստի օրը՝ դեկտեմբերի 15-ը տեղափոխել դեկտեմբերի 27: Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 27-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում:

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 27-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ	Թ. ԲՈՋՈՒԿՅԱՆ
Ս. ԱՆԱՆՅԱՆ	Ա. ՔՈՉԱՐՅԱՆ
Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ա. ՍՐԱՊՅԱՆ	Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ
Ա. ԱՆՏԻՆՅԱՆ	Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պ. ՊԱՊԻՆՅԱՆ	Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Շ. ՀԱԿՈԲՅԱՆ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 145-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 17-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 07-ի թիվ 16 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

«07 դեկտեմբերի 2022թ-ի թիվ 16 արտահերթ նիստ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կազմում ընդգրկված 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու մասին:

2. 2023թ-ի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

07 դեկտեմբերի 2022
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 146-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 500-ԻՑ ՊԱԿԱՍ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կազմում ընդգրկված 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող Անտառամուտ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Քարաբերդ բնակավայրերում վարչական ղեկավարներ ունենալուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

07 դեկտեմբերի 2022
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 147-Ն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 8,9,10,11,12,13, 14-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 15.11.2022թ-ի «2023 թվականի համար ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշումը:
2. 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Փամբակ համայնքի բնակավայրերի համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի (տեղական տուրքերի) 6), 7), 9), 10), 11), 12), 13), 16), 17), 18), 20) ենթակետերում և 19) ենթակետի բ. պարբերությունում օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա կիրառվել է 0.5 գործակից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

07 դեկտեմբերի 2022
գ. Փամբակ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 147-Ն որոշման

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/Փամբակ համայնքի Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնապատ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ և Քարաբերդ գյուղական բնակավայրերի/

1. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30**000 /երեսուն հազար/ դրամ.**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 3**000 /երեք հազար/ դրամ.**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000 /երկու հարյուր հազար/ դրամ.**

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000 /երկու հարյուր հազար/ դրամ.**

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000 /երկու հարյուր հազար/ դրամ.**

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.**

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.**

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի

թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 /մեկ հարյուր հազար/ դրամ**

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի, մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **30000 /երեսուն հազար/ դրամ**

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50500 /հիսուն հազար հինգ հարյուր/ դրամ.**

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500 քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50500 /հիսուն հազար հինգ հարյուր/ դրամ.**

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **175 /մեկ հարյուր յոթանասունհինգ/ դրամ**.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**

դ. խաղատների համար՝ **500000 /հինգ հարյուր հազար/ դրամ**

ե. շահումով խաղերի համար՝ **250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**

զ. վիճակախաղերի համար՝ **75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ.**

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 /երկու հազար/ դրամ.**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000 /չորս հազար/ դրամ.**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1750 /մեկ հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ.**

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **750 յոթ հարյուր հիսուն դրամ**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ **188 /մեկ հարյուր ութսունութ/ դրամ.**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ **75 /յոթանասունհինգ/ դրամ.**

14) Փամբակ համայնքի և նրա կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, կամ ապրանքների արտադրության, կամ աշխատանքների կատարման, կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.**

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու

թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **250 000 երկու հարյուր հիսուն հազար դրամ**

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1250000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3500000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝**5000000 /հինգ միլիոն/ դրամ.**

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.**

19) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ **20000 /քսան հազար/ դրամ.**

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ **150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.**

20) համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 500 քմ համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**
500-1000 քմ համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**
1000 քմ և ավելի՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
Մինչև 500 քմ համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**
500-1000 քմ համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**
1000 քմ և ավելի՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
Մինչև 500 քմ համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**
500-1000 քմ համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**
1000 քմ և ավելի՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000 /հինգ հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.

7.1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ **100՝/մեկ հարյուր/ դրամ.**

7.2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով ամսական՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **70 /յոթանասուն/ դրամ.**

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների),

հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **30 /երեսուն/ դրամ.**

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **20 /քսան/ դրամ.**

դ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **5 /հինգ/ դրամ** , իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **8 /ութ/ դրամ.**

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **10 /տաս/ դրամ.**

զ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն ենթակետի 1-5-րդ պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2) կետի ա-ե ենթակետերով սահմանված դրույքաչափով.

7.3) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ **50 /հիսուն/ դրամ.**

7.4) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7)-րդ մասի 7.2) կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

8) Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝

. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **200 /երկու հարյուր/ դրամ.**

. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

9) Ջրմուղ-կոյուղու համար համայնքի այն բնակավայրերում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման վճար՝

Ջրամատակարարման համար 1 խմ՝ **50 /հիսուն/ դրամ.**

Եթե ջրաչափ տեղադրված չէ յուրաքանչյուր տնտեսության համար՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

Ջրահեռացման համար յուրաքանչյուր տնտեսությունը տարեկան՝ **2000 /երկու հազար/ դրամ.**

10) Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, օգտվող յուրաքանչյուր տնտեսության համար սահմանել ամսեկան՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

11) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով սեփականաշնորհված բնակարանների 1 ք.մ–ի համար ամսեկան՝ **6 /վեց/ դրամ.**

12) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափը սահմանվում է՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

13) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափը ամսվա համար սահմանել՝

ա. Մարգահովիտ գյուղի «Կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող երաժշտական դպրոցի /խմբի/ ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

բ. Մարգահովիտ գյուղի «Կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող նկարչության խմբի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

14) Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **10000 /տաս հազար/ դրամ.**

15) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար չի սահմանվում՝ անվճար:

16) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝փոխհատուցման վճարի չափը մեկ փաստաթղթի համար սահմանվում է՝ **500 հինգ հարյուր դրամ**

17) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով սահմանվում է.

17.1) Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**

17.2) Ծննդօգնություն.

ա. թեթև միջամտություն՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

բ. ծանր միջամտություն **3000 /երեք հազար/ դրամ.**

17.3) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյուառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/՝

ա. Մանր կենդանիներ՝ **100 /մեկ հարյուր/ դրամ.**

բ. Խոշոր կենդանիներ՝ **200 /երկու հարյուր/ դրամ.**

17.4) Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ **400 /չորս հարյուր/ դրամ.**

17.5) Ախտահանություն՝ 1 քառ. մետր՝ **100 /մեկ հարյուր/ դրամ.**

17.6) Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառ. մետր՝ **100 /մեկ հարյուր/ դրամ.**

17.7) Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1քառ. մետր՝ **200 /երկու հարյուր/ դրամ.**

17.8) Արհեստական սերմնավորում՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

17.9) Կենդանու հերձում

ա. մանր կենդանիներ՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

բ.խոշոր կենդանիներ՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

17.10) Կենդանո ւբուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

17.11) Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից

ա. մանր կենդանիներ՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

բ. խոշոր կենդանիներ՝ **2000 /երկու հազար/ դրամ.**

17.12) Կենդանիների հետսպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից

ա. մանր կենդանիներ՝ **1000 /մեկ հազար/ դրամ.**

բ. խոշոր կենդանիներ՝ **2000 /երկու հազար/ դրամ.**

18) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ **3000 /երեք հազար/ դրամ.**

19) Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **0 /զրո/ դրամ**:

Համայնքի ղեկավար՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 148-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:

2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:

3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:

4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:

5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամդեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿՋԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

07 դեկտեմբերի 2022
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 149-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022թ-ի դեկտեմբերի 27-ը ժամը 11.00:

2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 15.11.2022թ-ի թիվ 140-Ա որոշումը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

07 դեկտեմբերի 2022
գ. Փամբակ